

### Արձանագրություն N 4

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության  
շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին)  
կառավարման խորհրդի արտահերթ նիստի

#### Ներկա էին՝

**խորհրդի նախագահ՝** Սուրեն Կարայանը,

**խորհրդի անդամներ՝** Պավել Սաֆարյանը, Հայկ Այվազյանը, Արմեն Գևորգյանը,  
Կարեն Սահակյանը, Կարեն Իսախանյանը, Աբգար Մկրտչյանը և Մարիամ Այվազյանը:

#### Մասնակցում էին՝

Լևոն Խալիկյանը, Արթուր Մկրտչյանը, Ալիս Երանոսյանը, Արարատ Սարգսյանը,  
Արմեն Տերտերյանը, Տարոն Հակոբյանը, Ռաֆիկ Բաղդասարյանը:

**Քարտուղար՝** Արծրուն Նաջարյան:

#### Օրակարգում՝

1. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2017 թվականի գործունեության  
տարեկան ծրագրի հաստատում:

Զեկուցող՝ Լևոն.Խալիկյան:

2. Տեսչական մարմնի 2018-2020 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտի  
նախագծի հաստատում:

Զեկուցող՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության  
աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության պետ  
Ռաֆիկ Բաղդասարյան:

#### **Նախորդ նիստում տրված հանձնարարականներ՝**

1. Ներկայացնել տեղեկատվություն նավթամթերքի շարժական լաբորատորիայի  
ընթացիկ վիճակի վերաբերյալ:

2. Ներկայացնել Տեսչական մարմնի կառավարման խորհրդի նիստի հեռահար  
(էլեկտրոնային) եղանակով իրականացման հնարավորությունը:

Զեկուցող՝ Լ.Խալիկյան:

#### **Օրակարգի հարցեր՝**

Օրակարգը հաստատվեց՝

Կողմ – 8

Դեմ - 0

#### **Նախորդ նիստում տրված 1-ին հանձնարարականի կապակցությամբ**

Լ.Խալիկյանը նշեց, որ նավթամթերքի շարժական լաբորատորիայի սարքը ենթարկվել է  
կալիբրովկայի (տրամաչափարկման), պատրաստ է և Հայաստանի  
Հանրապետությունում կլինի մոտ 10 օրից:

Նավթամթերքի շարժական լաբորատորիայի ընթացիկ վիճակի վերաբերյալ  
տեղեկատվությունը ընդունվեց ի գիտություն:

#### **Նախորդ նիստում տրված 2-րդ հանձնարարականի կապակցությամբ**

Լևոն Խալիկյանը նշեց, որ Տեսչական մարմնի կառավարման խորհրդի նիստի հեռահար  
(էլեկտրոնային) եղանակով իրականացման գործընթացը հնարավոր է և այն իրագործելի  
կլինի համապատասխան կարգ մշակելուց և հաստատելուց հետո: Հայկ Այվազյանը նշեց,  
որ խոսքը գնացել է հեռահար (էլեկտրոնային) եղանակով նիստի արձանագրության  
ստորագրման մասին:

